ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/23

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.01.2019թ. թիվ 27/26-3/1183-19 գրությամբ Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության (այսուհետ՝ Պատվիրատու) 23.01.2019թ. թիվ 01.3/1149-19 գրության հիման վրա, 30.01.2019թ. թիվ 27/26-3/1183-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ի կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/23 ընթացակարգի շրջանակներում 04.02.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ոստիկանությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 23.01.2019թ. թիվ 01.3/1149-19 գրությամբ ներկայացրել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2018/ՃՈ/Ա» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակից՝ Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ի տվյալները՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/23 ընթացակարգի շրջանակներում 04.02.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ԱՄ-2019/23 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ԱՄ-2019/23 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ոստիկանության և Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ի միջև 16.11.2018թ. կնքվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2018/ՃՈ/Ա-2» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

2. Պայմանագրի հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ն պարտավորվել է Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ 60 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան մինչև 2018 թվականի դեկտեմբերի 20-ը ՀՀ ոստիկանությանը մատակարարել 1900 հատ ամրակ (փոքր):

3. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետով սահմանվում է, որ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

4. Պայմանագրի 2-րդ կետի 2.1.1 ենթակետով սահմանվում է, Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

5. Պայմանագրի 2-րդ կետի 2.1.7 ենթակետով սահմանվում է, գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

6. Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ին ուղղված 11.01.2019թ. թիվ 11/15 գրությամբ ՀՀ ոստիկանությունը հայտնել է, որ ՀՀ ոստիկանության և Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ի միջև 16.11.2018թ. կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2018/ՃՈ/Ա-2» պայմանագրի համաձայն՝ Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ն պարտավոր էր պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարումն իրականացնել պայմանագրի հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին համաձայն:

Սակայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացության համաձայն՝ Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ի կողմից մատակարարում չի իրականացվել:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը, ՀՀ ոստիկանությունը 2019թ. հունվարի 10-ից միակողմանի լուծում է Պայմանագիրը, որի արժեքը կազմում է 133 000 ՀՀ դրամ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.01.2019թ. թիվ 27/26-3/1183-19 գրությունը, ՀՀ ոստիկանության 23.01.2019թ. թիվ 01.3/1149-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ ոստիկանության և Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ի միջև 16.11.2018թ. կնքվել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2018/ՃՈ/Ա-2» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ն պարտավորվել է Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ 60 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան մինչև 2018 թվականի դեկտեմբերի 20-ը ՀՀ ոստիկանությանը մատակարարել 1900 հատ ամրակ (փոքր):

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետով սահմանվում է, որ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2-րդ կետի 2.1.1 ենթակետով սահմանվում է, Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ին ուղղված 11.01.2019թ. թիվ 11/15 գրությամբ ՀՀ ոստիկանությունը հայտնել է, որ ՀՀ ոստիկանության և Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ի միջև 16.11.2018թ. կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2018/ՃՈ/Ա-2» պայմանագրի համաձայն՝ Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ն պարտավոր էր պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարումն իրականացնել պայմանագրի հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին համաձայն:

Սակայն պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացության համաձայն՝ Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ի կողմից մատակարարում չի իրականացվել:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը, ՀՀ ոստիկանությունը 2019թ. հունվարի 10-ից միակողմանի լուծում է Պայմանագիրը, որի արժեքը կազմում է 133 000 ՀՀ դրամ:

Այսպիսով՝ Պայմանագրի 2-րդ կետի 2.1.7 ենթակետով սահմանվում է, ***գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը*** (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

1.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Մասնակիցը ՀՀ ոստիկանության և Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ի միջև 16.11.2018թ. կնքված «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2018/ՃՈ/Ա-2» ծածկագրով ապրանքների մատակարարման պայմանագրի շրջանակներում չի իրականացրել

իրականացրել Պայմանագրով նախատեսված ապրանքները՝ 1900 հատ ամրակ (փոքր), մատակարարելու իր պարտականությունն, էականորեն խախտելով Պայմանագիրը, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ն թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.01.2019թ. թիվ 27/26-3/1183-19 գրությամբ Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Վիլարդ Պողոսյան Միերի Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**